

Վարդան Ա. Գալստյան

**ԹՅՈՒՐՔԱԽՈՄՆԵՐԻ ԷԹՆԻԿ  
ԻՆՔՆԱԳԻՏԱԿՅՈՒԹՅԱՆ ՎԱՂ  
ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ**

19-րդ դարավերջի Արևելյան Այսրկովկասի թյուրքալեզու և ռուսալեզու մամուլում\*

**Բանալի բառեր** – Արևելյան Այսրկովկաս, Ադրբեջան, թյուրքախոսներ, ադրբեջանցիներ, մահադակալներ, էթնիկ ինքնագիտակցություն, «Էթնիզմ», «Քեշքյուլ», «Թերջյուման», «Կասալի», Ունսիզադե, Գասպրինսկի, Շահթախտինսկի:

**Էթնիկ ինքնագիտակցությունը ընդունված է անվանել այն երևույթը, երբ որոշակի էթնոսը, այսինքն՝ «մենք» և «նրանք» տարբերակումը դնող մարդկանց մշակութային հանրույթը, գիտակցում է իր ընդհանրությունը և իրեն առանձնացնում է այլ հանրույթներից:**

Էթնիկ ինքնագիտակցության կարևոր բաղադրիչ է էթնոսի անդամների ընդհանուր ծագման գիտակցումը, որի ներքո սովորաբար հասկացվում է իրենց պատմական կենսավորձը<sup>1</sup>: Հավատն ընդհանուր ծագման հանդեպ, գումարվելով լեզվի, մշակույթի և ավանդույթների որոշակի համանմանությունը, նպաստում է էթնիկապես միավորված մարդկանց առանձնացմանը մյուսներից<sup>2</sup>: Ընդ որում էթնիկ ինքնագիտակցության առաջացումը պահանջում է տևական ժամանակ: Իսկ համահարթեցման դինամիկ գործընթացում ձևավորվում է բավականաչափ ընդհանուր էթնիկ մշակույթ, կենսավորձ, հիշողություն<sup>3</sup>:

Էթնիկ ինքնագիտակցության արտաքին դրսևորումը ընդհանուր ինքնանվանումն է՝ էթնոնիմը<sup>4</sup>: Դա էթնիկ ընդհանրության այն ամենակարևոր հատկանիշն է, որի միջոցով մարդիկ արտահայտում են իրենց պատկա-

\*Հոդվածն ընդունվել է տպագրության 20.01.2017:

1 Տե՛ս **Бромлей Ю.В.**, Очерки теории этноса, Москва, 1983, с. 56.

2 Տե՛ս **Вебер М.**, Отношения этнической общности, «Журнал социологии и социальной антропологии», 2004, т. VII, N 2, с. 10-15.

3 Տե՛ս **Phinney J.S.**, Ethnic identity in adolescents and adults: Review of research, «Psychological bulletin 1990», Vol. 108, N 3, p. 502.

4 Տե՛ս **Бромлей Ю.В.**, Очерки теории этноса, Москва, 1983, с. 56.

ԹՅՈՒՐՔԱԽՈՄՆԵՐԻ ԷԹՆԻԿ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՅՈՒԹՅԱՆ ՎԱՂ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ (ԺԵ) ԳՐԱԻՐԱԿԱՆ ԿԱՆՈՒՄ, ԹԻՎ 1 (57), ԽՈՍՎԱՐ-ՆԱՐԵՐ, 2017

նելությունը կոնկրետ էթնիկ խմբին<sup>5</sup>: Միաժամանակ տարբերակում են էթնիկ անվանման տեսակներ՝ **էնդոէթնոնիմ** (էթնոսի ինքնանվանում կամ ներքին էթնոնոնիմ) և **էքզոէթնոնիմ** (արտաքին էթնոնիմ, որը էթնոսին տալիս են այլ էթնիկ խմբերը): Դրանք կարող են նույնը լինել, այսինքն՝ էքզոէթնոնիմը կարող է լինել նույն էնդոէթնոնիմը, բայց կարող են նաև միանյացից տարբերվել: Ընդ որում երբեմն նույն էթնիկ միավորին այլ էթնիկ միավորները տարբեր անուններով են ձանաչում: Ամենից ավելի հաճախ դա հանդիպում է հարևանությամբ ապրող էթնոսների մեջ, բայց կարող են լինել նաև աշխարհագրորեն հեռու միջավայրերում<sup>6</sup>:

Արևելյան Այսրկովկասի թյուրքախոսները, բացի իրենց ցեղային առանձին անվանումներից (փաղար, բայաթ, ավշար, շահսևան և այլն<sup>7</sup>), ուշ միջնադարից ունեցել են տարբեր էքզոէթնոնիմներ, օրինակ՝ թաթար, թուրք, ինչպես նաև կրոնական և սոցիալական եզրույթներ՝ դզըլբաշ, թարաքյամա, համշարի, դաշար: Մրանք անվանումներ են, որոնք թյուրքախոս էթնիկ հանրույթներին տվել են այլ էթնոսները (հայեր, ռուսներ, վրացիներ, ավարներ, պարսիկներ, եվրոպացիներ, և այլն): Որպես էնդոէթնոնիմ (ներքին ինքնանվանում)՝ Արևելյան Այսրկովկասի թյուրքախոսների մոտ երկար ժամանակ ծառայել է «մահմեդական» եզրույթը: Ընդ որում այդ եզրույթն էլ միայն խիստ վերապահումով կարելի է ընդունել իբրև էնդոէթնոնիմ, քանի որ այն չէր բնորոշում էթնիկ կամ ազգային պատկանելություն, այլ ցույց էր տալիս զուտ կրոնական ինքնություն, պատկանելություն ուսմային (իսլամական համայնք): Ավելին, այս եզրույթը կիրառելի էր երկրամասի ոչ միայն թյուրքախոսների համար, այլև նույն տարածքում ապրող ոչ թյուրքալեզու (իրանալեզու, կովկասալեզու) ժողովուրդների՝ թալիշների, թաթերի, լեզգիների, ավարների համար:

Գիտության մեջ ընդունված է այս երևույթը բնորոշել **կոնֆեսիոնիմ** եզրույթով, որը մատնանշում է տվյալ հանրության կրոնական պատկանելությունը<sup>8</sup> (տվյալ դեպքում դա պատկանելությունն է իսլամական կրոնին): Այսպիսով կարող ենք ասել, որ 19-րդ դարի երկրորդ կեսին Արևելյան Այսրկովկասի թյուրքախոս հանրույթը հավաքական և ընդհանուր էնդոէթնոնիմ չի ունեցել: Նստակյաց և կիսանստակյաց կենցաղին անցնելուն զուգընթաց՝ ցեղային պատկանելություն բնորոշող ցեղանուններին աստիճանաբար փոխարինել է «մահմեդական» կոնֆեսիոնիմը, որը տիրապետող է դարձել 19-րդ դարում՝ երկրամասը ռուսական տիրապետության տակ անցնելուց հետո: Այդ կոնֆեսիոնիմն ընդհուպ մինչև 19-րդ դարի վերջերը լիովին բավարարում էր Արևելյան Այսրկովկասի թյուրքախոս հանրույթին՝ որպես ունիվերսալ ինքնանվանում:

Սակայն 19-րդ դարի վերջում, երբ թյուրքախոս բնակչությունն անցում էր կատարում քոչվոր կենսակերպից դեպի նստակեցություն, արդեն ձևավորվել էր քիչ թե շատ շարունակական և կայուն թյուրքալեզու գրավոր

5 Տե՛ս **Хотинец В.Ю.**, Этническое самосознание, Санкт-Петербург, 2000, с. 89.

6 Հմմտ. **Նալչաջյան Ա.**, էթնիկական հոգեբանություն, Եր., 2001, էջ 66:

7 Ավելի մանրամասն տե՛ս **Գալստյան Վ.**, Արևելյան Այսրկովկասի թյուրքական ցեղերը ԺԹ դարում, - «Գարդմանի և Շիրվանի հայության պատմա-մշակութային ավանդները (պատմություն և արդիականություն)»: Հանրապետական գիտաժողով (ապրիլի 29-30, 2016 թ.): Զեկուցումներ և զեկուցումների դրույթներ, Եր., 2016, էջ 33-59:

8 Տե՛ս **Бромлей Ю.В.**, Очерки теории этноса, Москва, 1983, с. 45-47.

մշակույթ (գրական լեզու, գրականություն և մամուլ), ասպարեզ էր մտել այդ գրավոր մշակույթի կրող մտավորականության երկրորդ սերունդը, սկսել էր տարածվել պանթյուրքիզմի գաղափարախոսությունը, ավելին, երբ թյուրքախոս հանրույթը իրեն համեմատության մեջ էր դնում Այսրկովկասի երկու խոշորագույն և կայացած ազգերի՝ հայերի և վրացիների հետ, այս պայմաններում արդեն «մահմեդական» կոնֆեսիոնիսը սկսեց չբավարարել:

Ուստի տվյալ պատմաշրջանում թյուրքախոս հանրույթի առավել զարգացած հատվածը հանդիսացող մտավորականությունը փորձել է գտնել ինքնանվանում իր համախմբվող էթնոսի համար: Այդ փնտրտուքն արտացոլվել է Արևելյան Այսրկովկասի 19-րդ դարի վերջերի թյուրքալեզու, ինչպես նաև ռուսալեզու մամուլում, տպագիր այլ աշխատություններում: Մեզ են հասել մի քանի հոդվածներ, որտեղ հեղինակները բարձրացրել են երկրամասի թյուրքախոս բնակչության էթնիկ պատկանելության հարցը և առաջարկել են տվյալ հանրույթի ինքնանվանման իրենց տարբերակը:

Այսրկովկասի թյուրքերենով Թիֆլիսում լույս տեսնող «Քեշքյուլ» («Սուֆիի պնակ») թերթի 1890 թ. 115-րդ համարում հրատարակվել է ուշագրավ հոդված՝ «Անգրագետ լինել նշանակում է ապրել փակ աչքերով» վերնագրով: Այն իրենից ներկայացնում է օտարի և Այսրկովկասի թաթարի երկխոսությունը, սակայն իր էության մեջ պարունակում է հետևյալ կարգի ուշագրավ մտորումները՝ տարածաշրջանի թյուրքախոս բնակչության էթնիկ պատկանելության վերաբերյալ.

**«Ես կանգնած էի Թիֆլիսի երկաթուղային կայարանում՝ բարձր փափախ և գեղեցիկ մորթյա վերարկու հագած, գոտուս վրա սուր կար: Կայարանը մարդաշատ էր: Ով ասես, որ այդտեղ չկար՝ ռուս, վրացի, հայ, մահմեդական, և բոլորը խոսում էին տարբեր լեզուներով: Աչքովս մի քանի արտասահմանցիներ ևս ընկան: Ով գիտի, ֆրանսիացի էին, միգուցե՝ անգլիացի: Սակայն նրանցից մեկը ուշադիր ինձ էր նայում: Ճիշտն ասած՝ նրա հայացքն ինձ դուր չէր գալիս: Մտքումս ասում էի. ինչ ես աչքդ տնկել վրաս, չլինի թե մտածում ես՝ կողոպտիչ եմ:**

Հանկարծ զանգը հնչեց, մտանք գնացք: Ես երկրորդ դասում նստեցի: Ինձ նայող արտասահմանցին նստեց դիմացս: Նրա հարևանությունն ինձ ամենևին դուր չէր գալիս: Նախ այն պատճառով, որ վրաս էր նայում, երկրորդ՝ նրա անմազ գլուխն ու կիսամորուսով դեմքը, կարծես սափրված այծ լիներ, քթին էլ ակնոց էր դրել: Յանկանում էի տեղս փոխել, սակայն մյուս տեղերն արդեն զբաղված էին:

- Դուք ո՞վ եք ազգությամբ:
- Մահմեդական:
- Ոչ, ես հարցնում եմ ազգային պատկանելությունը:
- Դե ես ասում եմ՝ մահմեդական եմ:

- Պարո՞ն, ազգությունը մի բան է, իսկ դավանանքը՝ մեկ այլ: Հասկացա, որ մահմեդական եք, սակայն ուզում եմ իմանալ, թե որ ազգից եք:

Մտածում էի. «Այս հարցին ինչ պատասխանեմ: Գիտե՞մ արդյոք, թե որ ազգից եմ: Տեսնես մեր մոլլան կամ մեր ախունդը գիտեն»: Այծի մորուսով օտարականը, տեսնելով իմ շփոթմունքը, ասաց.

- Պարոն, արաբը, պարսիկը, թուրքը, հնդիկը, աֆղանը և մյուսները բոլորն էլ մահմեդական են: Սակայն յուրաքանչյուրի ազգությունը տարբեր է: Ես ինքս կաթոլիկ եմ, սակայն ազգությամբ իտալացի եմ:

- Դուք ձիշտ եք, պարոն: Սակայն ինչքան էլ, որ ամոթալի լինի, պետք է խոստովանեմ, որ ես չգիտեմ, թե ես որ ազգից եմ:

- Պարոն, իսկապես ամոթալի է ազգությունը չիմանալ: Նույնն է, թե չիմանաս՝ հայրդ ու մայրդ ովքեր են: Դուք այն ցեղից չե՞ք, ձեզ թաթար են կոչում:

- Այո՛, մեզ թաթար են անվանում:

- Հիմա հասկացա, թե դուք որ ազգից եք: Դուք թաթարներ չեք: Թաթարները Ղրիմի և Կազանի մահմեդականներն են: Իսկ դուք ադրբեջանցի եք:

- Ներեցե՞ք, պարոն, ինչպե՞ս մեզ կոչեցի՞ք. – հարցրի ես:

- Ադրբեջանցի ժողովուրդ, սիրելիս: Ադրբեջան:

- Իրոք որ առաջին անգամ եմ լսում, որ մեզ անվանեն ադրբեջանցի: Ես լսել եմ, որ Արազ<sup>9</sup> գետի այն կողմում կա Ադրբեջան կոչվող նահանգ:

-Այո, և այնտեղի բնակիչներն էլ, ինչպես որ դուք, ադրբեջանցիներ են (ընդգծումը մերն է – Վ.Գ.)»<sup>10</sup>:

Այս հոդվածը մեր հետազոտության համար ուշագրավ նյութ է պարունակում, որն ունի մի քանի շերտ: **Նախ և առաջ՝** սրանով Արևելյան Այսրկովկասի թյուրքալեզու մամուլում և հրապարակախոսության մեջ առաջին անգամ օրակարգ է բերվել Այսրկովկասի թյուրքախոս բնակչության էթնիկ պատկանելության հարցը: Խրատական երկխոսության միջոցով ընթերցողին ներարկվել է այն գիտակցությունը, որ երկրամասի թյուրքախոս բնակչությունն առանձնանում է իբրև էթնոս:

**Երկրորդ** շերտը, ըստ մեզ, այդ ժամանակաշրջանում թյուրքախոս էթնիկ հանրույթի շրջանում տիրապետող կրոնական ինքնության գոյության և էթնիկ ինքնանվանման բացակայության քննադատությունն է: Ցույց է տրվում «մահմեդական» ինքնանվանման ժամանակավրեպ և հետամնաց լինելը: Սեփական էթնիկ ինքնանվանումն ունեցող մահմեդական այլ ժողովուրդների (աֆղաններ, պարսիկներ, հնդիկներ) կողքին էթնանվանում չունեցող թյուրքախոս հանրույթը ներկայացվել է որպես թերի և անգիտակից:

**Երրորդ** ուշագրավ հանգամանքն այն է, որ մատնանշվել է Արևելյան Այսրկովկասի թյուրքախոսների նկատմամբ «թաթար» անվան կիրառման չիմանավորված ու սխալ լինելը՝ պնդելով, որ Ղրիմի և Մերձվոլգայի թաթարները տարբեր են տվյալ երկրամասի թյուրքախոս բնակչությունից:

Սակայն խրատական հոդվածի գլխավոր ուղերձը Արևելյան Այսրկովկասի թյուրքախոսների համար որպես ինքնանվանում «ադրբեջանցի» եզրույթի կիրառումն է: Իսկապես, մինչև 1890 թվականը չկա թյուրքալեզու որևէ գրավոր աղբյուր, որտեղ Արևելյան Այսրկովկասի թյուրքախոսների կամ երկրամասի որևէ այլ էթնիկ խմբի համար կիրառվեր «ադրբեջանցի»

<sup>9</sup> Նկատի ունի Արաքս գետը:

<sup>10</sup> A. Aşırı. Azərbaycan mətbuatı tarixi (1875-1920), Bakı, 2009. s. 37-38; Габиббейли И.А., Этапы формирования идеала Азербайджанства и современность, – «Східний світ», НАН України, Киев, 2012, с. 44; Şahverdiyev A. Azərbaycan mətbuatı tarixi, Bakı, 2006, s. 53-54.

եզրույթը: Հողվածում էլ իրավացիորեն նշվել է, որ Ադրբեջան անունով հայտնի էր Արաքս գետից հարավ գտնվող՝ Իրանի հյուսիսային համանուն նահանգը: Սակայն դրա կողքին առաջ է քաշվել ոչ պակաս կարևոր դրույթ (կոնցեպտ) այն մասին, թե իբր Արաքսից հյուսիս և հարավ գտնվող հանրույթները կազմում են միասնական «ադրբեջանցի ժողովուրդ» անունով էթնոսը:

Կարծում ենք, որ հենց այս միտքն է մեզ հուշում հողվածի գաղափարական հենքն ու շարժառիթը: Հատկանշական է նաև, որ հողվածի հեղինակը նույնիսկ իր իսկական անունը չի հրապարակել, իսկ անվան փոխարեն ստորագրել է որպես «Ադրբեջանցի»՝ նաև դրանով ընդգծելով նյութի գլխավոր իմաստը և ուղերձը: Կարծիք կա, որ հողվածի հեղինակը «Քեշքյուլ» թերթի խմբագիր և հիմնադիր Զելալ Ունսիզադեն է: Դրա օգտին է խոսում նաև այն հանգամանքը, որ վերջինս 1891 թ. դիմել է ցարական իշխանությանը՝ «Ադրբեջան» անունով թերթ հիմնելու նախաձեռնությամբ<sup>11</sup>:

Նույն «Քեշքյուլ» թերթի 1891 թ. 22-րդ համարում լույս է տեսել ևս մեկ ուշագրավ հողված Այսրկովկասի թյուրքալեզու հանրույթի էթնիկ պատկանելության մասին: Այս դեպքում ևս հեղինակն ընթերցողին իր մտորումները փորձել է փոխանցել այսպիսի երկխոսության միջոցով.

**«Դու ազգությամբ ո՞վ ես:**

– **Ես մահմեդական եմ, նաև թյուրք:**

– **Դու օսմանցի ես:**

– **Ո՛չ, ես բիջանցի եմ:**

– **Որտե՞ղ է բիջանցիների երկիրը:**

– **Արաքս գետի այն կողմում ապրում են ազերիները, այս կողմում՝ բիջանցիները: Միասին մենք ադրբեջանցիներ ենք, բայց անջատ՝ մենք բիջանցիներ ենք:**

– **Քո լեզուն թյուրքերեն է, ուրեմն դու թյուրք ես:**

– **Քառ չկա, որը կրնա ազդեր իմ միտքը: Ես թյուրք եմ, բայց բիջանցի:**

– **Բիջանցի թյուրք լինելու փոխարեն, ինչո՞ւ դուք չեք լուծում այս երկրնտրանքը՝ ինքներդ ձեզ կոչելով ադրբեջանցի թյուրք (ընդգծումը մերն է – Վ.Գ.)»<sup>12</sup>:**

Հողվածը 1890 թվականին լույս տեսածի տրամաբանական շարունակությունն ու զարգացումն է: Նորից քննադատվում է Արևելյան Այսրկովկասի թյուրքախոսների էթնիկ ինքնագիտակցության ավանդական՝ կրոնական մակարդակը՝ «ես մահմեդական եմ»: Շարքային թյուրքախոսին ներարկվում է այն գաղափարը, որ կրոնական պատկանելությունը ազգ կամ ժողովուրդ չի մատնանշում:

Սակայն կարելի է նշմարել մեկ տարվա ընթացքում հասունացած մի նոր իրողություն: Հողվածում վեր է հանվել Արևելյան Այսրկովկասի թյուր-

11 Տե՛ս **Габидбейли И.А.** Этапы формирования идеала Азербайджанства и современность, с. 45.

12 **Swietochowski T.** Russian Azerbaijan, 1905–1920: The shaping of a national identity in a Muslim community, Cambridge University press 1985, p. 32; **Shaffer B.** Borders and brethren: Iran and the challenge of Azerbaijani identity, Cambridge, 2002, p. 30; **Alstadt A.** The Azerbaijani Turks Power and Identity under Russian Rule, Stanford, 1992, p. 70; **Аух Е.М.** Между приспособлениями самоутверждением, – Азербайджан и Россия: общества и государства, Вып. 4, Москва, 2001 ([http://old.sakharov-center.ru/publications/azrus/az\\_003.htm](http://old.sakharov-center.ru/publications/azrus/az_003.htm)). Նշված գրականության մեջ մեզ հետաքրքրող հողվածը ներկայացված է թարգմանությամբ:

քական ինքնագիտակցությունը: Ավելին, «թյուրքությունը» այս հոդվածում «տեղայնացվել» է՝ այս դեպքում ևս «ադրբեջանցի» արհեստական եզրույթի միջոցով: Որպես էթնոսի անվանում առաջ է քաշվել «ադրբեջանցի թյուրք» եզրույթը: Հոդվածում նորից կենտրոնական տեղում է Ատրպատականի (Ադրբեջան) և Արևելյան Այսրկովկասի թյուրքախոսների էթնիկ ընդհանրության գաղափարը: Այն արտահայտվել է բառախաղի միջոցով: «Ադրբեջանցի» եզրույթը բաժանված է խորհրդանշական երկու մասի՝ «ազերի» (Արաքսից հարավ ընկած տարածքի բնակչություն) և «բիջանցի» (Արևելյան Այսրկովկասի թյուրքախոս էթնոսը): Եզրույթի տվյալ բաժանումով հեղինակը քարոզել է այն գաղափարը, թե իբր միասնական էթնոսի գույգ մասերը բաժանված են: Ընդ որում Արևելյան Այսրկովկասի թյուրքախոս էթնիկ հանրույթի համար կիրառված «բիջան» (بیجان) բառը պարսկերենից թարգմանաբար նշանակում է անհոգի, անսիրտ, անկյանք<sup>13</sup>: Նման բառախաղը, մեր կարծիքով, նպատակ է ունեցել հավելյալ հուզական ֆոն հաղորդել հոդվածին:

«Ադրբեջանցի թյուրք» արհեստական եզրույթի առաջքաշումը, հուզական բառախաղի միջոցով Իրանական Ատրպատականի և Արևելյան Այսրկովկասի թյուրքախոս հանրույթների էթնիկ միասնության գաղափարի քարոզումը, մեզ թույլ է տալիս համոզվել վերևում հնչեցրած այն կարծիքի մեջ, որ «Բեշքուլ» թերթի և նրա հիմնադիր-խմբագիր Ջելալ Ունսիգադեի վրա ազդեցություն է ունեցել թյուրքիզմի կամ դրա ավելի ուշ շրջանի դրսևորում՝ պանթյուրքիզմի գաղափարախոսությունը՝ ի դեմս Իսմայիլ-բեկ Գասպրիհնսկու և նրա «Թերջյուման» թերթի<sup>14</sup>: Մեր վարկածը գալիս է ապացուցելու այն փաստը, որ պանթյուրքիզմի հոգևոր հայրը համարվող Իսմայիլ-բեկ Գասպրիհնսկին անձնապես ճանաչել է «Բեշքուլ» թերթի հիմնադիրներ Հաջի Սեիդ և Ջելալ Ունսիգադե եղբայրներին: Ավելին, երբ ցարական իշխանությունը երկար ժամանակ նրանց մերժում էր «Թերջյուման» թերթի հրատարակման գործում, Գասպրիհնսկին սեփական հոդվածների անանուն ժողովածու էր տպագրում Ունսիգադե եղբայրների Թիֆլիսում գտնվող տպարանում<sup>15</sup>: Հայտնի է, որ 1883 թ. Գասպրիհնսկին այցելել է Արևելյան Այսրկովկաս և կապեր հաստատել տեղի թյուրքախոս մտավորականության ներկայացուցիչների հետ<sup>16</sup>: Ավելի ուշ՝ 1893-ին, Բախչիսարայից բացի՝ Բաքվում ևս նշել են «Թերջյուման» թերթի հիմնադրման 10 տարին: 1894 թ. Գասպրիհնսկին այցելել է Բաքու<sup>17</sup>: Ավելին, դեռևս 1887 թվականին իր հոդվածներից մեկում անդրադառնալով օսմանյան սուլթանի և պարսից շահի հարաբերություններին, շիա-սուննի հակամարտությանը՝ նա կիրառել է «ադրբեջանցի ժողովուրդ» բառակապակցությունը: Գասպրիհնսկին մասնավորապես նշել է. «Կրոնական հակամարտությունը կարմիր ժապավենով անցնում է միասնական արյուն ունեցող

13 Sfin Persidsko-русский словарь, в двух томах, т. I, Москва, 1970, с. 237.

14 Ռուսական կայսրությունում պանթյուրքիզմի գաղափարախոսության և Իսմայիլ Գասպրիհնսկու գործունեության վերաբերյալ մանրամասն տես **Landau J.M.** Pan-Turkism: From irredentism to cooperation, London, 1995; **Гилязов И.** Тюркизм: Становление и развитие (характеристика основных этапов), Казань, 2002; **Зареванд.** Турция и Пантуранизм, Париж, 1930; **Османов Ю.Б.** Просветитель Востока Исмаил Гаспринский, Симферополь, 2014; **Georgon F.** Türk milliyetçiliğinin kökenleri, Yusuf Akçura, İstanbul, 1999.

15 **Togan Z.V.** Gasprali (Gasprinski), Ismail, – The Encyclopaedia of Islam, Leiden, 1965, p. 979-981.

16 **Османов Ю.Б.** Просветитель Востока Исмаил Гаспринский, Симферополь, 2014, с. 135.

17 **Гасанлы Дж.** Али Мардан-бек Топчибашев. Жизнь за идею, Москва, 2014, с. 33.

ադրբեջանական ժողովրդի ողջ պատմության ընթացքում՝ մինչև հիմա վնասակար ձևով անդրադառնալով քաղաքացիական և հասարակական կյանքի վրա»<sup>18</sup>: Այս խոսքում և հատկապես «միասնական արյուն ունեցող ադրբեջանական ժողովուրդ» բառակապակցության մեջ առկա է «երկու Ադրբեջանների» պանթյուրքիստական գաղափարը, որը նկատվում է նաև «Քեշքյուլ»-ի հոդվածում:

«Քեշքյուլ» թերթի վերոնշյալ երկու հոդվածները համարվում են Արևելյան Այսրկովկասում էթնոհամախմբվող թյուրքախոս հանրայթի էթնիկ պատկանելության և նրա ինքնանվանման շուրջ առաջին հրապարակումները՝ նոր ձևավորվող թյուրքալեզու մամուլում: Սակայն մինչ այդ էլ Այսրկովկասի ռուսալեզու մամուլում լույս է տեսել համանման մի հոդված, որի հեղինակը ևս երկրամասի թյուրքախոս հանրայթի ներկայացուցիչ էր: Դա Թիֆլիսում լույս տեսնող ռուսալեզու «Կովկաս» թերթի 1882 թ. 90-րդ համարում զետեղված Մուհամեդ-աղա Շահթախտինսկու՝ «Մահմեդականների դպրոցական կյանքը» վերնագրով ռուսերեն հոդվածն է<sup>19</sup>: Այդտեղ մինչ մահմեդականների կրթության խնդրին հասնելը հեղինակն արծարծել է Այսրկովկասի թաթարների (թյուրքախոսների) ինքնանվանման հարցը: Այսպես. «Ռուսները, օրինակ վերցնելով հենց մեզնից, մեզ անվանում են մահմեդական: Մենք, ինչ-որ կերպ կորցրած լինելով ժողովրդի վերաբերյալ մեր պատկերացումը, ինքներս մեզ կոչել ենք ոչ թե մեր ազգության, այլ մեր կրոնի անունով, որը պատկանում է այդքան մեծ թվով ազգերի և լեզուների:

Ցանկալի է, որպեսզի ինչպես մենք, այնպես էլ մյուս ժողովուրդները մեզ կոչեն մեր ազգությունից, այլ ոչ թե մեր կրոնից բխող անունով: Դրանով մահմեդական բառը կօգտագործվի բացառապես կրոնական իմաստով և չի խառնի երկու տարբեր հասկացությունները կրոնի և ազգության վերաբերյալ:

Սակայն ինչպե՞ս մեզ կոչել: Երբ խոսք է լինում մեր լեզվի մասին, մենք այն անվանում ենք թյուրքերեն կամ թուրքերեն, որոնք նույն իմաստն ունեն և ծագել են «թյուրք» գոյական բառից: Մեր հարևան պարսիկներն ու հայերը մեզ անվանում են թուրքեր: Այս տեսանկյունից մենք կարող էինք կոչվել թուրքեր: Սակայն, որպեսզի այդ անունը դառնա համընդհանուր կերպով ընդունելի, հարկավոր է, որ ռուսներն էլ այն ընդունեն: Սակայն նրանք դա չեն ընդունի, քանի որ դեռ մինչև մեզ հետ ծանոթանալը նրանք, ինչպես և բոլոր եվրոպացիները, սովոր էին այդ անունով կոչել օսմանյան թյուրքերին: Մենք թաթար չենք կոչվի, քանի որ այդ բառը մենք կիրառում ենք բացասական իմաստով: Չի կարելի նաև ժողովրդին պարտադրել ադրբեջանցի անունը, որը մեր ազգը մատնանշելու համար այժմ օգտագործվում է էթնոգրաֆիայում և լեզվաբանության մեջ: Միգուցե մի օր և՛ գրականությունը, և՛ պաշտոնական աշխարհը կընդունեն այդ անվանումը: Իսկ մինչ այդ, չունենալով ավելի լավը՝ ուրիշների օրինակով մենք էլ Պարսկաստանի Ադրբեջան նահանգը բնակեցնող ադրբեջանցի թուրքերին և

18 Османов Ю.Б. Просветитель Востока Исмаил Гаспринский, Симферополь, 2014, с. 87.

19 «Կովկաս» թերթը հիմնվել է Թիֆլիսում 1846 թ. և գործել մինչև 1918 թվականը, տե՛ս «Кавказ» [Тифлис, 1846–1918], – Русская периодическая печать (1845–1918), Справочник, Москва, 1959, с. 314–315.

**մեր Այսրկովկասի մահմեդականներին կոչում ենք մահմեդականներ»<sup>20</sup>:**

Մուհամեդ–աղա Շահթախտինսկու այս հոդվածը մեզ հայտնի առաջին, թեկուզև ռուսալեզու գրավոր աղբյուրն է, որտեղ Արևելյան Այսրկովկասի թյուրքախոս էթնիկ հանրույթի ներկայացուցիչը բարձրացնում է սեփական էթնիկ պատկանելության և էթնանվանման հարցը: Նա մերժում է «մահմեդական» կոնֆեսիոնիմը՝ իրավացիորեն բացատրելով, որ այն չի կարող էթնիկ պատկանելություն բնորոշել: Շահթախտինսկին դեմ չէ, որպեսզի իր հանրույթի համար առելի «թաթար» էքզոէթնոնիմի փոխարեն կիրառվի պարսիկների և հայերի կողմից օգտագործվող «թուրք» անվանումը: Այնուհետև հեղինակն առաջ է քաշում «ադրբեջանցի» եզրույթը, որը, ըստ նրա, կիրառվում էր ազգագրության և լեզվաբանության մեջ:

Հայտնի է, որ Շահթախտինսկին բարձրագույն կրթություն է ստացել Եվրոպայում՝ Գերմանիայում և Ֆրանսիայում<sup>21</sup>: Հավանաբար նրա նշած եզրույթը վերաբերում է 19-րդ դ. արևմտյան գիտության մեջ Իրանի Ատրպատական (Ադրբեջան) նահանգի և նրա թյուրքախոս բնակչության համար կիրառվող «Ադրբեջան» և «ադրբեջանցի» անուններին, որոնք, սակայն, արևմտյան գիտնականներն այդ ժամանակաշրջանում չէին օգտագործում Արևելյան Այսրկովկասի ու նրա թյուրքախոս էթնիկ հանրույթի պարագայում<sup>22</sup>: Ինքը Շահթախտինսկին ևս ընդունել է, որ «ադրբեջանցի» անվանումը Այսրկովկասի թյուրքախոս բնակչությանը խորթ է: Պետք է ուշադրություն դարձնել նաև այն իրողությանը, որ Մուհամեդ–աղա Շահթախտինսկին 1882 թ. տարբերություն էր դնում իր նշած Իրանի Ադրբեջան նահանգի թյուրքախոսների և Արևելյան Այսրկովկասի մահմեդականների միջև՝ նրանց անվանելով տարբեր եզրույթներով:

Մենք հնարավորություն ունենք դիտարկել և ընկալել Շահթախտինսկու մոտ էթնիկ ինքնագիտակցության և էթնիկ ինքնանվանման գաղափարի էվոյուցիան, քանի որ հեղինակն այս թեման ավելի հանգամանալից արծարծել է ռուսալեզու «Կասպի» թերթի 1891 թ. 93-րդ համարում զետեղված «Ինչպե՞ս կոչել այսրկովկասյան մահմեդականներին» հոդվածում: Այնտեղ կարդում ենք.

**«Մինչև վերջերս ռուսերենում այսրկովկասյան մահմեդականներին կոչում էին մուսուլմաններ՝ դրա տակ հասկանալով ոչ թե ընդհանրապես իսլամի հետևորդներին, այլ ռուսական Այսրկովկասի թյուրքերեն լեզվով խոսող բնակչությանը: Ժողովրդին իր կրոնի անվամբ կոչելը ռուսները փոխառել են հենց Այսրկովկասի մահմեդականներից, ովքեր մինչև հիմա էլ իրենց ժողովուրդն ու լեզուն անվանում են բացառապես մուսուլմանական՝ կրոնի վերաբերյալ պատկերացման մեջ կորցնելով լեզվի մասին պատկերացումը: Այն հարցին, թե որ ժողովրդին է նա պատկանում և ինչ լեզվով է խոսում, այսրկովկասյան մահմեդականն ուրիշ պատասխան չի տալիս, բացի նրանից, որ ինքը մուսուլման է և խոսում է մուսուլմաներեն: Հայ կաթոլիկներն էլ իրենց ժողովուրդն ու լեզուն կոչում են միայն կաթոլիկական:**

**Ցանկանալով այսրկովկասյան մահմեդականներին տալ անուն,**

20 Шахтагинский М. Школьная жизнь мусульман, «Кавказ», N 90, Тифлис, 1882.

21 Sîu Şahıaxlı, Seçilmiş əsərləri, Bakı, 2006, s. 4-5.

22 Sîu Malcolm J. The history of Persia: From the most early period to the present time, London, 1829.

որը կբխեր ոչ թե նրանց կրոնից, այլ նրանց ժողովրդական պատկանելությունից՝ վերջին շրջանում նրանց սկսել են ռուսերենում կոչել թաթարներ: Այս նորարարությունը ոչ մի կերպ չի կարելի համարել հաջողված:

Լեզուն, որով խոսում են Այսրկովկասի մահմեդականները, թաթարերենն չէ, այլ թուրքերեն է կամ նույնն է, թե թուրքերեն է, որը բաժանվում է հիմնական խոսվածքների՝ օսմանյան, սելջուկյան և ադրբեջանական:

Այսրկովկասյան մահմեդականներին թաթար անվանելու անհարմարությունը գործնականում զգացվում է Բաքվում: Այստեղ ռուսները, որ ավելի լավ են ծանոթ Ռուսաստանի ներքին նահանգների թաթար բնակչությանը, մյուսներից շուտ են հասկանում, թե լեզվական, արտաքին տեսքի, իրավունքների և սովորույթների ինչ մեծ տարբերություն կա այսրկովկասյան թուրքի և ներքին նահանգների թաթարի միջև: Դրանից ելնելով՝ Բաքվում, որտեղ կարիք կա այսրկովկասյան մահմեդականներին տալ իրենց ժողովրդական պատկանելությունից բխող անուն, տեղի ուղղահավատներին (նկատի ունի շիա մահմեդականներին – Վ.Գ.) կոչում են պարսիկ: Իհարկե, այս անունն էլ հարմար չէ: Քանի որ եթե այսրկովկասյան թուրքերը թաթարներ չեն, ապա առավել ևս պարսիկներ չեն: Ժողովուրդներն իրարից տարբերվում են լեզվով, իսկ պարսկերենն ու թուրքերենն ընդհանրապես տարբեր են:

Այսրկովկասյան մուսուլմաններին թաթարներ անվանելը անհարմար է նաև այն պատճառով, որ ո՛չ իրենք, ո՛չ էլ իրենց ամենամոտ հարևանները՝ պարսիկները, օսմանները, քրդերն ու հայերը, այդպես չեն անվանել և չեն էլ ցանկանում լսել այդ անվան մասին: Ճիշտն ասած՝ այդ անունը նրանց պարզապես վիրավորում է: Լենկ Թեմուրի արշավանքների ժամանակից սկսած՝ թաթար անունն ամբողջ Ասիայում արտասանվում է ոչ առանց չարության և ատելության:

Ամենից հարմար է այսրկովկասյան մուսուլմաններին կոչել ադրբեջանցի, իսկ իրենց լեզուն՝ ադրբեջաներեն: Ադրբեջան նահանգը, որի մեծ մասը Պարսկաստանից անցել է Ռուսաստանին և կազմում է ներկայիս Այսրկովկասը, բնակեցված է գրեթե ամբողջությամբ այդ թուրքական ժողովրդով, որին ինչպես արևելյան գրողները, այնպես էլ եվրոպացի աշխարհագրագետներն ու ազգագրագետներն անվանում են ադրբեջանական թուրքեր: Առօրյա կյանքում անհարմար է ժողովրդին և լեզուն անվանել երկու բառով՝ ադրբեջանական թուրք կամ ադրբեջանական թուրքերեն: Այդ պատճառով ավելի նպատակահարմար կլիներ ռուսերենում թաթարի փոխարեն այսրկովկասյան մուսուլմաններին կոչել ադրբեջանցիներ, իսկ այսրկովկասյան թուրքերենը թաթարերենի փոխարեն՝ ադրբեջաներեն»<sup>23</sup>:

Մուհամեդ-աղա Շահթախտինսկին մեկ անգամ հաստատել է, որ 19-րդ դարի վերջում Արևելյան Այսրկովկասի թուրքախոս հանրույթի մոտ էթնիկ ինքնագիտակցությունը հանդես էր գալիս կրոնական գունավորմամբ և «մահմեդական» ինքնանվանմամբ: Հեղինակը նորից հիմնավորել է երկրամասի թուրքախոսներին ռուսների կողմից թաթար անվանելու սխալ

23 Шахтагинский М. Как называть Закавказских мусульман, – «Каспий», Баку, 1891, N 93.

լինելը: Սակայն նա նաև աղավաղված է ներկայացրել իրականությունը, երբ նշել է, թե Այսրկովկասի բնակչության գերակշիռ մեծամասնությունը կազմում էր թյուրքախոս էթնիկ հանրությոթ: 19-րդ դարի վերջին պաշտոնական վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ թյուրքախոսները մեծամասնությունն էին միայն Այսրկովկասի արևելքում՝ Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում, որտեղ էլ հայերի, թաթերի, թալիշների և լեզգիների սովոր բնակության պայմաններում նրանք կազմում էին բնակչության 50–60 տոկոսը<sup>24</sup>: Իսկ Բաքվի շիաներին պարսիկ կոչելու Շահթախտինսկու հիշատակած պրակտիկան, մեր կարծիքով, հետևանք էր այն բանի, որ տվյալ տարածքում կար իրանախոս հոծ պարսիկ-թաթ բնակչություն: 19-րդ դարի վերջին Բաքվի նահանգում բնակվում էին մոտ 120 հազար մահմեդական թաթեր: Բացի այդ՝ տվյալ ժամանակաշրջանում Իրանի գավառներից Բաքու, նավթահանքերում աշխատելու էին գալիս մեծ քանակությամբ թյուրքախոս բանվորներ, որոնք որոշ չափով համալրում էին քաղաքի թյուրքախոս բնակչության թիվը: Կենցաղային հարաբերություններում նրանք համշարի էին կոչվում, բայց պարսկահպատակ լինելով՝ հատկապես պաշտոնական գրագրության մեջ առավել հայտնի էին «պարսիկ» անունով<sup>25</sup>:

Մեզ համար հատկապես ուշագրավ է Շահթախտինսկու հողվածի այն մասը, որտեղ հեղինակն առաջարկում է Այսրկովկասի թյուրքախոսներին անվանել ադրբեջանցի, իսկ նրանց լեզուն՝ ադրբեջաներեն: Ընդ որում այդ տողերում կարելի է նկատել, որ նա որպես թյուրքական էթնոսի հիմնական և էթնոտարբերակիչ գործոն է համարում թյուրքերեն լեզուն:

Հողվածների համեմատության ժամանակ առաջին հայացքից կարելի է եզրակացնել, թե հեղինակի մոտ գաղափարական հիմքը մնացել է նույնը. Շահթախտինսկին քննադատում է կրոնական ինքնությունը, սխալ և բացասական է համարում Այսրկովկասի թյուրքախոսների համար թաթար անվան կիրառությունը: **Սակայն կա շատ կարևոր տարբերություն: Եթե 1882 թ. հողվածում հեղինակը ադրբեջանցի եզրույթը համարում էր ժողովրդի համար խորթ, ապա 1891 թ. հողվածում այդ եզրույթը նրա համար միակ ընդունելին է՝ մահմեդական, պարսիկ, թաթար անվանումների փոխարեն: Ընդ որում նա որպես ինքնանվանում նախ առաջ է քաշում «ադրբեջանական թյուրք» եզրույթը, որից անցում է կատարում «ադրբեջանցի» եզրույթին՝ միայն առաջինի երկար լինելու պատճառով:**

«Ադրբեջանցի թյուրք» եզրույթը մեզ արդեն ծանոթ է թյուրքալեզու «Քեշքյուլ» թերթի 1891 թ. 22-րդ համարից: Շահթախտինսկու մոտ էլ Ջելալ Ունսիզադեի նմանությամբ առկա է «թյուրքական» ինքնագիտակցության տեղայնացումը՝ արհեստական «Ադրբեջան» եզրույթի միջոցով:

Ինչպես արդեն նշել ենք, Ունսիզադե եղբայրներն անձնապես և գաղափարապես մոտ էին ռուսական պանթյուրքիզմի հոգևոր հայր Իսմայիլբեկ Գասպրինսկու հետ: Մեր կարծիքով՝ Շահթախտինսկին՝ ինքը, հակված է եղել «ադրբեջանցի» արհեստական եզրույթի ընտրությանը՝ այն

24 Стѣ Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г., Наличное население обоого пола по уездам, с указанием числа лиц преобладающих родных языков, Вып. 7, СПб., 1905.

25 Стѣ Свод статистических данных о населении Закавказского края, извлечѣнных из посемейных списков 1886 года, Бакинская губерния, Тифлис, 1893.

պատճառաբանելով Արաքսից հյուսիս և հարավ թյուրքախոս բնակչության լեզվական ընդհանրությամբ: Սակայն նրա այս գաղափարի վրա ազդեցություն է ունեցել Ռուսական կայսրությունում ծնունդ առած պանթյուրքիզմը: Դրանով կարելի է բացատրել նաև այն, որ 1882 թ. հողվածում հեղինակը տարբերություն էր դնում Իրանի Ադրբեջան նահանգի և Արևելյան Այսրկովկասի թյուրքախոսների միջև, իսկ արդեն 1891 թ. հողվածում այդ երկու էթնոսներին համարում էր միևնույն ժողովուրդը, ինչն էլ նման է Գասպրինսկու ավելի վաղ կիրառած «միասնական արյուն ունեցող ադրբեջանցի ժողովուրդ» բառակապակցությամբ:

Հարկ է նշել, որ Արևելյան Այսրկովկասի թյուրքախոս էթնիկ հանրույթի համար «ադրբեջանցի», իսկ երկրամասի համար էլ «Ադրբեջան» արհեստական եզրույթների ամրագրման ամենամեծ ջատագովը եղել է հենց Շահթախտինսկին: Նա հայտնի է արաբատառ թյուրքերենի այբուբենի բարեփոխման իր նախագծով, որի հիման վրա կազմած գրքույկներից մեկն անվանել է «Փոքր ադրբեջանական այբուբեն»<sup>26</sup>: Իսկ 1902 թ. լույս տեսած մեկ այլ գրքույկում Շահթախտինսկին թյուրքերեն եզրույթին գուգահեռ Այսրկովկասի թյուրքերենը հաճախ անվանում էր «ազերերեն»<sup>27</sup>:

Պետք է նկատի ունենալ, որ թյուրքալեզու մամուլն այս ժամանակաշրջանում կայուն երևույթ չէր, քանի որ Այսրկովկասի ամեն մի թյուրքալեզու տպագիր օրգանը գործում էր առավելագույնը 8 տարի և այն էլ՝ հաճախակի դադարներով, և ի վերջո՝ ցարական իշխանությունը փակում էր դրանք: Այսպես, առաջին թյուրքալեզու «Էքինչի» («Մշակ») թերթը գործել է 1875-1877 թթ. և փակվել է ռուս-թյուրքական պատերազմի ժամանակ՝ պատերազմական ժամանակաշրջանի գրաքննության պատճառով: 1879 թ. Թիֆլիսում հիմնադրված «Զիյա» («Լույս») թերթը, որը 1883-ին վերանվանվել է «Զիյա Քաֆքասիյե» («Կովկասի լույս») և սկսել տպագրվել Շամախիում, փակվել է 1884 թ. ցարական գրաքննության և ֆինանսական խնդիրների պատճառով<sup>28</sup>: «Բեշքյուլ» թերթը հիմնադրվել է 1883 թ. Թիֆլիսում՝ որպես ամսագիր: Սակայն շատ չանցած՝ այն վերածվել է շաբաթաթերթի: Հատկանշական է, որ ցարական իշխանության հրամանով այն փակվել է 1891-ին՝ նույն տարում, երբ լույս էր տեսել մեր ուսումնասիրության առարկա հողվածը: Փակման պատճառի վերաբերյալ վարկածներից մեկը տպագրական սխալն է, որը տեղ է գտել 1891 թ. 122-րդ համարում<sup>29</sup>: Մեկ այլ վարկածի համաձայն էլ՝ թերթի փակման պատճառը հենց «ադրբեջանցի» արհեստական ինքնանվանման քարոզումն էր<sup>30</sup>: Սակայն մեր կարծիքով՝ փակման ավելի իրատեսական վարկածը «Բեշքյուլի» գաղափարական ուղղվածությունն էր, որը ցարական իշխանության համար ցանկալի չէր, քանի որ Արևելյան Այսրկովկասի թյուրքախոս լեզվական հանրույթի մեջ սերմանում էր նախկին վիճակից շեղվող էթնիկ ինքնագիտակցություն, տարածում անսրող պանիսլամական և պանթյուրքական

26 Шахтахтинский М. Маленькая Азербайджанская Азбука, фонетическое восточное письмо, – Seçilmiş əsərləri, Bakı, 2006, s. 385.

27 Шахтахтинский М. Пояснительная записка о фонетической восточной азбуке, Тифлис, 1902, с. 2.

28 Sfin Aşığı A. Azərbaycan mətbuatı tarixi (1875-1920), Bakı, 2009, s. 30-31.

29 Sfin Зейналов А. А. Проблема взаимоотношений азербайджанской литературы и печати с цензурой (1850-1905), Автореферат канд дисс., 1990, с. 47.

30 Sfin Shaffer B. Borders and brethren: Iran and the challenge of Azerbaijani identity, Cambridge, 2002, p. 30.

գաղափարներ, տպագրում գրական երկեր թյուրքերեն լեզվով: Հենց այս պատճառով «Քեշքյուլ» թերթը հայտնվել էր ցարական գրաքննության խիստ հսկողության տակ:

Վերոնշյալ հանգամանքներից ելնելով՝ դժվար է դիտարկել էթնիկ ինքնագիտակցության գրավոր դրսևորումների էվոլյուցիան ավելի երկարատև ժամանակի համատեքստում: Բավական է նշել միայն, որ 1891 թ. «Քեշքյուլ»-ի փակվելուց հետո Այսրկովկասում թյուրքալեզու թերթ չկար ընդհուպ մինչև 1903 թ., երբ սկսեց լույս տեսնել «Շարգ ի ռուս» («Ռուսական Արևելք») թյուրքալեզու թերթը:

Այսպիսով, կարող ենք ասել, որ 19-րդ դարի երկրորդ կեսին Արևելյան Այսրկովկասում ձևավորված թյուրքալեզու գրավոր մշակույթը՝ թյուրքերեն գրականության և մամուլի տեսքով, նաև նույն այդ թյուրքալեզու հանրային ներկայացուցիչների ստեղծած ռուսալեզու գրավոր մշակույթն ու մամուլը, դարձել էին այն ամբիոնը, որի միջոցով նոր ձևավորված մահմեդական թյուրքախոս մտավորականությունը բարձրացնում էր սեփական էթնիկ պատկանելության հարցը: Թյուրքախոս հանրային առաջադեմ հատվածը հանդիսացող մտավորականության մոտ ձևավորվածը կարելի է համարել **էթնիկ ինքնագիտակցություն**, քանի որ այն հստակ կերպով տարբերակում էր իր էթնոսը երկրամասի մյուս էթնոսներից՝ ընդ որում այդ տարբերակման հիմքում նախ և առաջ դնելով թյուրքերեն լեզուն: Նոր սերնդի մտավորականությունը, որը կրթություն էր ստացել ռուսական և եվրոպական կրթօջախներում, նախ քննադատում էր շրջանառվող «մահմեդական» ինքնանվանումը՝ այն համարելով զուտ կրոնական պատկանելության ցուցիչ (ատրիբուտ): Այնուհետև մերժում էր ռուսական «թաթար» ներմուծված անունը՝ որպես բացասական երևույթ և սխալ բնորոշում: Որպես ինքնանվանման սեփական տարբերակ հաճախ առաջ էր քաշվում բոլորովին նոր, երկրամասի և թյուրքախոս հանրային համար անհասկանալի «ադրբեջանցի» եզրույթը, որը մինչ այդ կիրառվում էր իբրև բացառապես Իրանի հյուսիսարևմտյան համանուն նահանգի և նրա բնակչության տեղական-տարածքային անվանում: Այս փաստը, մեր կարծիքով, հետևանք էր Ռուսաստանում ծնունդ առնող պանթյուրքիզմի գաղափարական ազդեցության, նաև որոշ չափով՝ ռուսական տեղական կառավարման և վիճակագրական մարմինների դիտավորության կամ գուցե անգրագիտության, երբ մարդահամարների ժամանակ թյուրքախոս հանրային համար շատ հազվադեպ, բայց այնուամենայնիվ կիրառվում էին «ադրբեջանական թաթարներ», «ադրբեջաներեն լեզու» կամ համանման այլ եզրույթներ<sup>31</sup>:

Հարկ է նշել, որ թեև 19-րդ դարի վերջում երկրամասի և նրա թյուրքախոս հանրային շրջանում «Ադրբեջան» և «ադրբեջանցի» եզրույթները մտան շրջանառություն մեջ, սակայն լայն տարածում չստացան և չարմատավորվեցին: Ընդհուպ մինչև 1918 թվականը հայտնի են մտավորականության արդեն հաջորդ սերնդի նշանավոր ներկայացուցիչների հրապարակախոսական հոդվածները, որոնց հեղինակները նույն կերպ քննադա-

31 Стів Распределение народностей, населяющих Кавказ, по губерниям и областям Кавказа, – Кавказский календарь на 1887 год, с. 220; Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г., Наличное население обоого пола по уездам, с указанием числа лиц преобладающих родных языков, Вып. 7, с. 6; Алфавитный список народов, обитающих в Российской империи, Издание канцелярии кабинета министров, СПб., 1895, с. 68.

տում են տիրապետող «մահմեդական» ինքնանվանումն ու թյուրքախոս հանրության հանդիմանում էթնիկ ինքնանվանման, այսինքն՝ էնդոէթնո-նիմի բացակայության համար<sup>32</sup>:

**Վարդան Ա. Գալստյան** – գիտական հետաքրքրությունների բնագավառն ընդգրկում է Արևելյան Այսրկովկասի քաղաքական պատմությունը, 19-րդ դարում երկրամասի թյուրքախոս բնակչության լեզվական, մշակութային և էթնիկ վերափոխումները: Ուսումնասիրում է Արևելյան Այսրկովկասում թյուրքալեզու գրավոր մշակույթի ազդեցությունը մահմեդական բնակչության էթնոհամախմբման գործընթացի վրա՝ 19-րդ դարի երկրորդ կեսում:

## Summary

### THE EARLY DEMONSTRATIONS OF ETHNIC CONSCIOUSNESS OF TURKIC SPEAKING PEOPLE

In Turkic and Russian press of the Eastern Transcaucasia at the end of the 19<sup>th</sup> century

Vardan A. Galstyan

**Key words** – Eastern Transcaucasia, Azerbaijan, Turkish-speaking people, Muslims, ethnic self-consciousness, “Ekindzhi”, “Keshkul”, “Terjuman” “Kaspiy”, Unsizade, Gasprinskiy, Shahtakhtinski.

In the end of the 19th century important changes took place in the life of Turkic speaking ethnic population of Eastern Transcaucasia. Due to literal activity of Mirza Fathali Akhundov and his followers, Turkic literary language and literature were formed. Under the influence of Turkic literature and western education a totally new class of intellectuals emerged. They studied in Russian, some of them in European educational centres, learned western languages and science. The next step of changes was the formation of Turkic press which eventually became the scene where new intellectuals shared their thoughts about ethnic consciousness of Turkic ethnos.

In this article are represented examples from Turkic and Russian press of the past quarter of the 19th century where Turkic speaking authors appeal to their ethnos. They called to refuse dominating religious self-identification of “muslims” and found the term “tatar” inaccurate as a name of Turkic ethnos of Transcaucasia. Under the influence of rising Panturkism in Russian empire they began to promote as ethnonym the artificial term “Azerbaijani” which was traditionally used for the region and people in the north of Iran.

32 Տե՛ս Vəzirov N.B. Əsərləri, Bakı, 2005, s. 342; Տե՛ս ‘սսլ՝ Nəmanzadə Ö.F. Mən kiməm?!, Seçilmiş əsərləri, Bakı, 2006, s. 233-241; Տե՛ս ‘սսլ՝ Балаев А. Азербайджанское национальное движение в 1917-1918 гг., Баку, 1998, с. 31.

## РАННИЕ ПРОЯВЛЕНИЯ ЭТНИЧЕСКОГО САМОСОЗНАНИЯ ТЮРКОЯЗЫЧНОГО НАСЕЛЕНИЯ

В тюркоязычной и русскоязычной прессе Восточного  
Закавказья конца XIX века

Вардан А. Галстян

**Ключевые слова** – Восточное Закавказье, Азербайджан, тюрко-говорящие, мусульмане, этническое самосознание, «Экинджи», «Кешкюл», «Терджюман» «Каспий», Унсизаде, Гаспринский, Шахтагинский.

В конце XIX века в жизни тюркоязычного населения Восточного Закавказья произошли важные изменения. Благодаря литературной деятельности Мирзы Фатали Ахундова и его последователей сформировались тюркоязычная литература и литературный язык. Под влиянием этой литературы и западного образования (в российских и европейских учебных заведениях) сформировалась и новая интеллигенция, которая была знакома с западными языками и наукой. Следующим этапом изменений стало появление тюркоязычной прессы, ставшей трибуной, с которой интеллигенция преподносила свои представления этнического самосознания тюркоязычного этноса.

В настоящей статье представлены примеры из тюркоязычной и русскоязычной прессы последней четверти XIX века, в которых тюркоязычные авторы взывали к своему этносу. Они призывали отказаться от преобладавшего религиозного самоназвания “мусульмане” и находили ошибочным применение названия “татары” к образуемому тюркоязычному этносу Закавказья. Но под влиянием развивавшегося в Российской империи идеологии пантюркизма они начали пропагандировать в качестве своего этнонима искусственный термин “азербайджанцы”, который традиционно использовался как название региона и населения на северо-западе Ирана.